№ 4 (8)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2019

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

4 (8)

ԵՐԵՎԱՆ 2019
ЕРЕВАН 2019
YEREVAN 2019

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №4 (8). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2019. – 148 с.

ISSN 1829-4820

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

ГОСТЕВАЯ СТРАНИЦА

РЕШЕНИЕ ПЕДАГОГИЧЕСКИХ СИТУАЦИЙ В НАЧАЛЬНОЙ ШКОЛЕ

Анаит Овиковна Овакимян
hovakimyananahit@aspu.am

Специалист отдела управления обеспечением качества образования,
Армянский государственный педагогический университет им. Хачатура Абовяна
Ереван, Республика Армения

Нелли Завеновна Карапетян
karapetyannelli49@aspu.am

К.п.н., доцент кафедры педагогики Армянского государственного
педагогического университета им. Хачатура Абовяна
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

В статье говорится о педагогических ситуациях, отмечаются условия формирования и создания педагогических ситуаций. Говорится о поэтапных решениях, которые преподносятся с помощью подробного анализа педагогических ситуаций.
Ключевые слова: педагогическая ситуация, педагогическая проблема, конфликт, фазовый характер, описание, содержание.

Մանկավարժական իրավիճակը մանկավարժական գործընթացի, մանկավարժական իրողության բաղադրամասն է, որի օգնությամբ ման-

կավարժը ղեկավարում և կարգավորում է կրթադաստիարակչական գործընթացը: Մանկավարժական իրավիճակները բացահայտում և ամփոփում են մանկավարժական գործընթացի, համակարգի առավելությունները և թերությունները: Նրանք նշանակալի դերակատարում ունեն յուրաքանչյուր մանկավարժի գործունեության մեջ, նրա մասնագիտական զինանոցի կարևոր գործիքն են:

Ըստ Ե.Ա. Կլիմովի՝ մանկավարժական գործունեությունը մանկավարժական բազմաբնույթ պրոբլեմային իրավիճակների բացահայտման, մանկավարժական խնդիրների լուծման բարդ գործընթաց է [3]: Յուրաքանչյուր մանկավարժական իրավիճակի հիմքում հակասությունն է, դրա զարգացումը և հանգուցալուծումը: Այդ պատճառով յուրաքանչյուր իրավիճակ պրոբլեմային է: Գիտական գրականության վերլուծությունը (Յու.Ն. Կուլյատկին, Վ.Ա. Սլաստենին, Մ.Մ. Մանուկյան և ուրիշներ) փաստում է, որ պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծումը նպաստում է ուսուցիչների հաղորդակցական, համագործակցային կարողությունների, մանկավարժական կոմպետենտության ձևավորմանը [1: 210-215]:

Մանկավարժական իրավիճակ կարելի է նախագծել, սակայն շատ հաճախ դրանք ուղղակի կարող են ծագել ուսուցման գործընթացում: Այդ պատճառով մանկավարժական իրավիճակը կյանքի պատմություն է, փոքրիկ դրվագ, որի հետ մանկավարժը կարող է բախվել իր ամենօրյա աշխատանքում:

Ցանկացած մանկավարժական իրավիճակի հիմքում կոնֆլիկտն է, հակասությունը: Մանկավարժական իրավիճակ կարող է առաջանալ, եթե առկա է՝

- բացասական վերաբերմունք ինչ-որ բանի կամ որևէ մեկի հանդեպ,
- տարաձայնություն, տարբեր կարծիքներ, տեսանկյուններ,

• հակազդեցություն՝ գործողություն, որը համընկնում է դիմացինի գործողությանը,

• դիմակայում, երբ փորձում են պնդել սեփական կարծիքը կամ ուղղակի հակառակվել [2]:

Մանկավարժական իրավիճակների նպատակային լուծման համար բացառիկ մեծ է ուսուցչի դերը, նրա մանկավարժական վարպետությունը:

Գիտական հետազոտությունների համակարգված վերլուծությունը հիմնավորում է, որ մանկավարժական իրավիճակների լուծումը փուլային բնույթ ունի: Գիտնականները առանձնացնում են հետևյալ փոխկապակցված գործողությունները՝

1. հայտնաբերվող փաստ,
2. կոնկրետ մանկավարժական իրավիճակի նկարագրություն, բովանդակությունը,
3. մանկավարժական իրավիճակի վերլուծությունը՝ նպատակ ունենալով որոշակիորեն պարզել կոնֆլիկտի բովանդակությունը,
4. գլխավորի և երկրորդականի տարանջատումը,
5. մանկավարժական տեսական և գործնական գիտելիքների նպատակային հարաբերակցում,
6. մանկավարժական խնդրի լուծման ուղիների ընտրություն,
7. ինքնավերլուծություն, գնահատում և ինքնագնահատում:

Մենք նպատակահարմար ենք գտնում քննարկել մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում ծագած մանկավարժական իրավիճակ, որը տեղի ունեցավ Անանիա Շիրակացու անվան ճեմարանի տարրական դպրոցում: Հենվելով մանկավարժական պրակտիկայի ընթացքում ձեռք բերված տվյալների, որոշ առումով փորձի վրա՝ ավելի մանրամասն քննարկենք այդ քայլերից յուրաքանչյուրը:

1. ***Հայտնաբերվող փաստ:*** Առաջին դասարանում սովորող երեխաներից մեկի մոտ առկա է ակնհայտ ագրեսիվություն, մեծ դժվարություն-

ներ՝ կապված դպրոցին հարմարվելու հետ, որը իր ազդեցությունն է ունենում դասարանում իրականացվող ուսումնական գործունեության վրա:

2. ***Կոնկրետ մանկավարժական իրավիճակի նկարագրություն, բովանդակություն:*** *Իրավիճակը նկարագրվում է իր բոլոր դետալներով, հնարավորության դեպքում ներկայացվում է նաև զրույցը: Յուրաքանչյուր տարիքային շրջափուլին հատուկ են այդ տարիքին բնորոշ մանկավարժական իրավիճակներ:*

Երգ և երաժշտության դասի ժամանակ առաջին դասարանում սովորող աշակերտը, առանց մանկավարժի թույլատվության, կանգնեց, մոտեցավ դասարանի կենտրոնին և պառկեց այնտեղ: Մանկավարժը, ծանոթ լինելով երեխայի մոտ առկա խնդրին, փորձեց նրան ուշադրություն չդարձնել և շարունակել դասը, բայց երեխան հանկարծ կանգնեց, մոտեցավ մանկավարժին, այդպես կանգնած մնաց մի քանի րոպե, որից հետո գնաց դասարանի անկյունը և նստեց հատականին՝ ձեռքերով երեսը փակած: Մի քանի րոպե այդպես մնալուց հետո՝ նա կանգնեց, մոտեցավ երեխաներին և սկսեց հարվածել: Դասարանում գտնվող հոգեբանը նրան անմիջապես դասարանից դուրս տարավ և սկսեց զրուցել նրա հետ: Միևնույն ժամանակ դասարանում մանկավարժը փորձում էր երեխաներին հանգստացնել:

Երեխայի մուտքը դպրոց ենթադրում է որոշակի դժվարություններ դպրոցին հարմարվելու և նրա կանոններով առաջնորդվելու հետ կապված, որը իր տեղն է գտնում 6 տարեկանի ճգնաժամում: Քննարկվող օրինակում երեխայի դրսևորած վարքի մեջ մեծ դեր է խաղում հենց այս գործոնը, սակայն չպետք է աչքաթող անել այն միջավայրը, որտեղ ապրել և ապրում է երեխան՝ ընտանիքը: Երբ երեխայի ցուցաբերած վարքի շուրջ զրուցում էինք երեխային դասավանդող մանկավարժների, նրա հետ աշխատող հոգեբանի հետ, նրանք մատնացույց էին անում հենց ընտանիքի գործոնը՝ նշելով, որ արդեն դպրոցում երեք ամիս սովորելով՝ երեխան

շարունակում է ցուցաբերել ոչ ադեկվատ վարք այն դեպքում, երբ երկու ամիսը լիովին բավարար է նման խնդիրը լուծելու համար:

3. ***Մանկավարժական իրավիճակի վերլուծությունը՝ նպատակ ունենալով որաշակիորեն պարզել կոնֆլիկտի բովանդակությունը:*** *Վերլուծությունը պահանջում է պատասխանել հետևյալ հարցերին. ո՞վ է իրադարձության և զրույցի մասնակիցը, ո՞րն է դրդապատճառը:*

Մանկավարժական իրավիճակի մասնակիցներն են սովորողները և մանկավարժը: Կոնֆլիկը կապված է սովորողի դպրոցին չհարմարվելու հետ, որի արդյունքնում տուժում է ոչ միայն սովորողը, դասարանը, այլև նվազում է ուսուցման գործընթացի արդյունավետությունը: Երեխային որևէ գործողության մղում է ազատ լինելու ձգտումը: Նա պատրաստ չէ պատասխանատվություն կրելու: Դրա փոխարեն նա նախընտրում է անել ինչ ցանկանում է:

4. Գլխավորի և երկրորդականի տարանջատումը: *Իրավիճակի վերլուծության հիմքում ընկած է մանկավարժական խնդրի ձևակերպման հնարավորությունը: Մանկավարժը պետք է կարողանա հստակորեն և ճշգրիտ ձևակերպի այդ խնդիրները, շեշտադրի առաջնայինը, նախագծի քայլերի ճիշտ հաջորդականությունը:*

Վերը նշված օրինակում առաջնային խնդիրներից է *բարդ* երեխայի հարմարման գործընթացի պլանավորված կազմակերպումը, հոգեբանական, մանկավարժական աջակցման ապահովումը, սովորողների ուշադրության կենտրոնացումը ոչ թե երեխայի արարքների, այլև դասագործընթացի վրա:

5. Մանկավարժական տեսական և գործնական գիտելիքների նպատակային հարաբերակցում: *Անհրաժեշտ է վերհիշել նմանատիպ իրավիճակներ, մանկավարժահոգեբանական գրականություն ընթերցել, որտեղ մանկավարժական իրավիճակը վերլուծում են, եզրահանգումներ են կատարում, որոշում մանկավարժական խնդիրը: Ինչպես նաև հաշվի առնել տվյալ տարիքային փուլին բնորոշ տարիքային առանձնահատկությու-*

ները, այն մեթոդաբանական մոտեցումները և սկզբունքները, որոնք հենքային են մանկավարժական ներգործության գործընթացում:

Այս փուլում հոգեբանամանկավարժական գրականությունից մանկավարժը ուսումնասիրում է 6 տարեկանի ճգնաժամը, ծանոթանում նրա ընթացքը մեղմող միջոցներին: Ուսումնասիրում նմանատիպ մանկավարժական իրավիճակները, վերլուծում դրանց լուծման տարբերակները: Առավել կարևոր է բովանդակային և ընթացակարգային բաղադրիչների համալիրի մշակումը, այսինքն՝ կառուցել այն քայլաշարը, որը մանկավարժին հնարավորություն կտա հանգուցալուծել առաջացած մանկավարժական իրավիճակը:

6. Մանկավարժական խնդրի լուծման ուղիների ընտրություն: *Այս փուլը բավականին բարդ է, քանի որ միևնույն իրավիճակը տարբեր համամանքներում, տարբեր գործոնների ազդեցությամբ բազմատեսանկյուն բնույթ է ձեռք բերում: Կարելի է վստահաբար ասել, որ նույնիսկ հարուստ փորձ ունեցող մանկավարժներն այս փուլում որոշակի դժվարություններ կարող են ունենալ:*

Առկա մանկավարժական խնդիրները դասարանին դասավանդող մանկավարժները և հոգեբանը փորձեցին միասին լուծել: Նրանք նախ կազմակերպեցին հանդիպում, որպեսզի որոշեն իրենց անելիքը: Հանդիպման ընթացքում որոշվեց, որ հարկավոր է ուսումնական գործունեությունը այնպես պլանավորել, որ այն հնարավորին չափ հետաքրքրի *բարդ* աշակերտին: Դասարանում դասաժամերին պետք է ներկա լինի հոգեբանը, որը հարկ եղած դեպքում պետք է աշխատի սովորողի հետ: Պետք է կազմակերպվի նաև հանդիպում դասարանի մյուս անդամների և հոգեբանի հետ:

7. Ինքնավերլուծություն, գնահատում և ինքնագնահատում: *Պայմանավորված այն բանով, թե որքանով էր արդյունավետ մանկավարժի կողմից ընտրված խնդրի ճիշտ լուծումը, արդյունքների քննարկումը,*

վերլուծությունը, թերությունների բացահայտումը ապահովում են հետադարձ կապը:

Այսպիսով՝ մանկավարժական իրավիճակը մանկավարժական գործընթացի բաղադրիչ է, որի վերլուծությունը և արդյունավետ լուծումը ուսուցչի մանկավարժական կոմպետենտության կարևոր չափանիշ է և տարրական դպրոցի ուսուցման գործընթացի արդյունավետության բարձրացման պայման:

ЛИТЕРАТУРА

1. *Մանուկյան Ա.* Պրոբլեմային իրավիճակներում մանկավարժական խնդիրների լուծման ժամանակակից տեխնոլոգիաներ և տեխնոլոգիական համակարգեր: – Եր., Զանգակ, 2013:
2. *Кан-Калик В.А.* Учителю о педагогическом общении: Книга для учителя / В.А. Кан-Калик. – М.: Просвещение, 1987. – 190 с.
3. *Климов Е.А.* Психология профессионала: избранные психологические труды / Е.А. Климов; Российская акад. образования, Московский психолого-социальный ин-т. – М.: Изд-во Московского психолого-социального ин-та; – Воронеж: МОДЭК, 2003. – 454, [1] с.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Ա.Հ. Հովակիմյան
hovakimyananahit@aspu.am

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կրթության որակի ապահովման և կառավարման բաժնի մասնագետ
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Ն.Զ. Կարապետյան
karapetyannelli49@aspu.am

Մ.գ.թ., դոցենտ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մանկավարժության ամբիոնի դոցենտ
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննվում են մանկավարժական իրավիճակները, նշվում են մանկավարժական իրավիճակների ձևավորման, առաջացման պայմանները և անդրադարձ է կատարվում նրա լուծման փուլային բնույթին, որը ներկայացվում է մանկավարժական իրավիճակի մանրամասն վերլուծության միջոցով:

Բանալի բառեր՝ մանկավարժական իրավիճակ, մանկավարժական խնդիր, կոնֆլիկտ, փուլային բնույթ, նկարագրություն, բովանդակություն:

STAGES OF SOLVING PEDAGOGICAL SITUATIONS IN ELEMENTARY SCHOOL

A. Hovakimyan
hovakimyananahit@aspu.am

Specialist at the Department of Education Quality Assurance Management
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Yerevan, Republic of Armenia

N. Karapetyan
karapetyannelli49@aspu.am

PhD of Pedagogical Sciences, Associate Professor at the Department of of Pedagogy
Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

The article speaks about pedagogical situations, mentions the conditions of forming and creating pedagogical situations. The article also introduces phased solutions, which are presented with the help of a detailed analysis of pedagogical situations.
Keywords: pedagogical situation, pedagogical problem, conflict, phase nature, description, content.

Информация о статье:
статья поступила в редакцию 27 ноября 2019 г.,
подписана к печати в номер 4 (8) / 2019 – 09.12.2019 г.